

դաւանութեան հարցը երկրորդական տեղ բերու-
նի հայի մտքը մէջ եւ ազգային միութեան
գաղափարը վառ ու կենդանի մնայ եկեղեցի-
ներից դուրս: Շատ ենք պատմել հետեւ եւ
մօտիկ անցեալում: Իմա մեր պարտքն է դա-
սեր առնել այդ անցեալից, հասկանալ, խրատել:

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 9-ին

Յունիսի 10-ին, ինչպէս հետագայից ձեռ-
քովն ընդունուած դպրոցի նոր շինութեան
հիմքը: Շինութիւնը, ինչպէս յայտնի է, իր
հաշուով կառուցանուած է պ. Գրիգոր Առաքե-
լեան ժամը 11 1/2-ին սկսվելը հանդէսը չի-
նութեան տեղում, քաղաքային բուլվարի մօտ,
ուր շինված էր ամբիօն, զարդարված թարմ
ձաղկերով, անթիւ դրօշակներով: Մուտքի
առաջ կար կամար Առաքելեանի անունն ըս-
կալուող բազմաթիւ քաղաքային խմբակներ
այդտեղ: Այս սկսվելը օրհնութիւնը: Թիսակա-
տարութիւնը տեւեց մինչեւ ժամի մէկը, որը
կատարեցին ուս եւ հայ հոգեւորականութիւ-
նը: Թուրք զաւր Մօլլա-Հիւսէյնը մի ճառ
խօսեց, եւ վերջապէս դրվեց ուսման տաճարի
հիմնաքարը: զինտրական եւ բնական զըս-
րոցի երաժշտական խմբերը նուագում էին ան-
գաղար: Փառաւոր հանդէսին ներկայ էր ան-
ձամբ նուիրատուն, ուսումնարանների վարչու-
թեան կողմից՝ Կովկասեան ուսումնարանական
չըջանի հոգաբարձու օգնական Լապալտինսկի
եւ ուրիշ մասնաւոր հիւրեր: Ժամը 2-ին կա-
յացաւ ճաշկերոյթ Բէզարեանների տանը, ուր
հրաւիրված էին աւելի քան 300 քաղաքացի-
ներ ամեն դասակարգից, որոնց մէջ 50 հոգի
թուրքեր: Զաշկերոյթը տուեց պ. Առաքելեան
Քաղաքացիները ցանկացան հետեւեալ օրը
պատուել նրան ճաշկերոյթով, բայց նա հրա-
ժարվեց: Ստացվել են աւելի քան քսան շնոր-
հաւորական հեռագրեր, որոնց մէջ շնորհա-
կալութիւն էին յայտնում բարեբարքի: Հեռա-
գիր ուղարկել էին՝ ուսումնարանական չըջանի
հոգաբարձու Եանուսովի, բնական դպրոցի
պատուաւոր հոգաբարձու Ալ. Մէլիք-Աղաբեան
եւ մի քանի շուշեցիներ: Զաշկ ժամանակ ա-
ռաջարկեցան Թագաւոր Կայսրի, նախկին
փոխարքայ Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաւիչի,
ժողովրդական լուսաւորութեան մինիստրի,
Կովկասեան կառավարչապետի, նրա օգնականի,
Գանձակի նահանգապետի եւ Առաքելեանի կե-
նացները, որոնք ընդունվում էին աղմկալի
կիցցեցներով: Պաշտօնական կենացների ժամա-
նակ Տիրայր վարդապետը ոտի կանգնելով ա-
ռաջարկեց մի կողմնակի կենաց, մուսաւորութեան
տալով վեհափառ Կաթողիկոսի կենացը, որը
զայրոյթ պատճառեց սեղանակիցներին: Երեւի

—ներկայ դէպքում բժիշկներին,—հազիւ թէ
Եւրօպայում գտնվէր մի հատ բժիշկ, որ երկու
ձեռքով չը ստորագրէր բժիշկ Կաղալիսի դրած
պահանջներին, գուցէ եւ աւելի խիստ լեզուով
արտայայտած: Եւ եթէ Պարիզի Ակադեմիան,
փոխանակ իսկոյն եւ եթէ դրականապէս իր
կարծիքը յայտնելու, յանձնել է հարցի քննու-
թիւնը առանձին յանձնաժողովի, զրա միակ
պատճառն այն է, որ նա ստիպված է իր այդ
կարծիքը ձեւակերպել յայտնի պատճառաւ-
նուութեամբ, համոզեցուցիչ եւ ոչ-բժիշկների
համար, մի եւ նոյն ժամանակ եւ հաշտեցնող
այն բոլոր բարդ չափերը, որոնք կապված են
ամուսնութեան խնդրի հետ: Որովհետեւ, զըժ-
բաղդաբար, ակադէմիական գիտութիւնը չէ,
որ վերջնականապէս վճռէ այդ հարցը, այլ բո-
լորովին ուրիշ հիմնարկութիւններ, որոնք զեւ
չարունակում են շատ անգամ վիրաւորական
համարել իրանց համար գիտութեան ներկա-
յացուցիչների միջամտութիւնը չիրանց գործե-
րի մէջ:

2) որ մեզ մօտ ամուսնութիւնը համարվում
է ամենից առաջ զուտ կրօնական, սրբազան
արարողութիւն, ի հարկէ, յայտնի հասարա-
կական եւ բնական պահանջների վրա հիմնված:
Բայց եթէ քիչ մօտիկից նայենք, կը տեսնենք,
որ բժշկութիւնը հին ժամանակներից սկսած
խաղաղեցի եւ չարունակում է խաղալ յայտնի
եւ խոյր դեր այդ կրօնական խորհրդի մէջ:
Օրինակ. 1) Ժնդակների հարցը, որ այժմ պաշ-
տօնապէս պահանջվում է պատկովորները, զուտ
առողջապահական հարց է, ի հարկէ. 2) հաս
եւ չհասի հարցը նոյնպէս մի եւ նոյն նպատա-
կին է ծառայում. 3) վերջապէս ֆիզիքական
եւ ֆիզիօլոգիական յայտնի արանները, որոնք
սկզբնաբնով ճանրվածքն են ամուսնութիւնը լու-
ծելի են դարձնում,—զուտ բժշկական հարցեր
են: Վերջին տեսակի հարցերից շատ հետաքր-
հա

անարժան լիազօրը խիստ զրգոված էր Կաթո-
ղիկոսի դէմ, որ նրան հեռացրեց այդ չաղ
պաշտօնից:

Սեղանի կառավարիչ Յ. Պաշտօնեանց ամ-
փոյ կերպով բացատրեց շուշեցու ընդունա-
կութիւնը եւ անխոնջ աշխատասիրութիւնը:
Բնական դպրոցի վերատեսուչ Զիպիգո պատմեց
պ. Եանուսովի գործունէութիւնը 1879 թւից
մինչեւ այսօր: Գ. Իշխանեան պատմեց Շուշու
նախկին նախանձելի գրութիւնը եւ այժմեան
դատարկութիւնը: Մի թուրք բացատրեց, որ
ուսումն առաջ զնայով, այժմ բանտի տեղ մենք
կուենանք դպրոց: Զաւր վերջացաւ ժամը
6 1/2-ին:

Այդ, Առաքելեանի անունը անջինջ կը մնայ
շուշեցու սրտում, մանաւանդ այժմ, երբ մեծ
վտանգ էր սպառնում մեր քաղաքից դպրոցը
փոխադրելու:

Ստացվելը վեհափառ Կաթողիկոսի կօնակը,
որով պատւիրում է Արսէն վարդապետ Ղըլ-
ճանին կատարել հոգաբարձական ընտրութիւն
թեմական դպրոցի համար: Եթէ իսկապէս հո-
գաբարձութիւնը իրաւաւոր է չեն լինի, եթէ
նրանց կը արվի Մատթէոս Կաթողիկոսի սահ-
մանագրութիւնը, այն ժամանակ ժողովուրդն
ուրախութեամբ կընտրէ իր ներկայացուցիչնե-
րին դպրոցը կառավարելու համար:

Թեմական դպրոցը չը տեսնված աննախան-
ձելի գրութեան է հասած. 500 աշակերտ ու-
նեցող մի դպրոցից աւարտում են միայն 3 հո-
գի, այն ինչ բնական դպրոցում V, VI եւ
VII դասարանների բոլոր աշակերտները փո-
խադրվում են: Միթէ եւ զարմանալի եւ ցա-
ւալի չէ: Արցախեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ, յունիսի 15-ին, Թիֆլիս ժամանեց
երկրագործութեան մինիստրի օգնական Ստե-
փան Եւ կը մնայ Թիֆլիսում երկու օր եւ կը
ժամօրհանէր երկրագործութեան մինիստրի
թեմական տեղակալի հիմնարկութիւնների հետ:
Կիրակի օր նա կուղեւորվի դէպի Օձիս կա-
լուածքը, ուր պէտք է հիմնվի գիւղատնտեսա-
կան դպրոց, այնտեղից կանցնի Ալայանի, ուր
կայ ամերիկական վազի տնկարան եւ այս կը
չարունակի իր ճանապարհը դէպի միւս փորձ-
նական կայարանները:

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան
մինիստրի օգնական Ստեփանի գալու առիթով
կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը
որոշել է ներկայացնել յատուկ զեկուցում Թիֆ-
լիսի այգեգործական դպրոցի բարեփոխման մա-
սին: Դպրոցը կառուցել է նոր շինութիւններ
եւ մտադիր է յարմարեցնել նրանց մի մասը
գինեգործութեան համար, ուստի կարօտ է

քրական եւ ուսանելի է մեզ համար ներկայ
դէպքում այն, որ ամուսնիներից մէկի բերա-
նից փչող դարչանոտութիւնը ծառայում է մեզ
մօտ խառապահանջ ապահարգանի վերին աս-
տիճանի սահմանափակ առիթներից մէկը,—մի
բան, որ մեր ժամանակ ուղղակի ծիծաղելի է,
քանի որ յայտնի են, թէ յիշեալ դարչանոտ-
ութիւնը լինում է մեծ մասամբ վատ, փտող ա-
տամները, որոնք փոխելու եւ փչացած ատամ-
ների տեղ նոր, հիմնարկները դնելը, որոնց
նման հիւանդը երբեք չէ էլ ունեցել—այժմ
դատարկ արարողութիւն է,—այն ինչ հին
ժամանակները դա գաղտնիք է համարվել:

Ուրեմն մենք տեսնում ենք, նոյն այս օրի-
նակից, որ մեր պապերը, իրանց ժամանակ
գիտութեան եւ հակացողութեան համեմատ
աշխատել են, իրանց կարողացածի չափ բա-
րեխիղճ կերպով կատարել իրանց քաղաքա-
ցիական պարտքը ամուսնական խորհուրդը
հիմնիկաւ Հապա ինչ է խանգարում եւ մեզ
կատարել մեր քաղաքացիական պարտքը, յայտ-
նի փոփոխութիւններ մտցնելով նոյն հիմնար-
կութեան մէջ, ժամանակակից պահանջների
համեմատ, եթէ միայն մենք կոյր կամ անօրիտ
չենք, տեսնելով այժմեան հասարակութեան
մէջ առաջացած նոր, չը տեսնված երեւոյթ-
ներ, որոնք սպառնում են ոչ միայն մարդկա-
յին սերնդի կանոնաւոր շարունակութեան, որը
պահի իսկական նպատակն է կազմում, այլ եւ
դարձնում են այդ սրբազան խորհուրդը մի
վրդովեցուցիչ դահիճ, չարիքը հովանաւորող
հիմնարկութիւն: Եթէ մի պահանջ ինքն ըստ
ինքեան հանրօգուտ, խելացի եւ արդար է,
հապա ում համար կարող է վնասակար լինել
նրա իրաւորութեամբ կանգնել մէջ, եթէ ոչ երկ-
րորդական, գծում, եսակաւ հաշիւների համար
միայն:

Ի հարկէ, մենք չենք պնդում, թէ այսպիսի

նպատակների, որոնց մասին եւ մտադիր է դե-
կուցանել մինիստրի օգնականին:

Պաշտօնապէս յայտնված է, որ մարզանցի
արդիւնաբերողների ժողովը, որ նշանակված
էր առաջիկայ կերակի օր, յունիսի 19-ին,
Քուլթայիսում, յետաձգված է մի շաբաթով եւ
տեղի կունենայ յունիսի 26-ին:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի
օգնական Ն. Ա. Զիլերէլ այցելեց քաղաքային
Միքայէլեան արհեստաւորաց դպրոցը:

Լրագիրները հաղորդում են, որ իշխանուհի
Արդուլեան-Երկայնաբաղուկ, որ պարապում
է քանդակագործութեամբ, մեծ աջողութիւն
է ունեցել արտասահմանում: Իր պատրաստած
կնոջ բնական մեծութեամբ արձանի համար
նա L'Academie Julien-ի վերջին մրցահա-
ղէտում ստացել է մեծ ունեւայ մեդալ:

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի
հոգաբարձական ընտրութիւնները տեղի կու-
նենան սեպտեմբեր ամսին: Քահանաներին
պատուիրված է, որ նրանք պատրաստեն ծխա-
կանների լիակատար ցուցակներ եւ որոշ ծա-
մանակամիջոցից յետոյ ներկայացնեն կօնսիս-
տօրիային:

«Մշակի» այն բաժանորդներին, որոնք փո-
խում են իրանց հասցէն, յիշեցնում ենք, որ
պէտք է վճարեն իւրաքանչիւր փոփոխութեան
համար 40 կօպէկ: Այդ գումարը կարելի է ու-
ղարկել եւ պօստային մարկաներով:

Թիֆլիսի վաճառանոցում այժմ սահմանված
են մի համար հետեւեալ սակագները: Տաւարի
եւ ոչխարի մի ֆունտը արժէ 8 1/2 կօպէկ,
գոմէշի մի ֆունտը 8, տաւարի մի ֆունտը
տեղ 15 կօպէկ ֆունտը: Գոմէշի մի ֆունտը
է խաւովի տաւարի մի ֆունտը: Սակագները
հետ եւ զետեղիլ տառնձին տեղում, որի վրա
նշանակված կը լինի խոյր տառերով զգու-
շա մի բառը: Այս սակագները ոյժ են ստա-
ցիլ ներկայ յունիսի 14-ից մինչեւ նոր փո-
փոխութիւն անելը:

«Нов. Время» լրագրին կիւղից հեռագրում
են յունիսի 9-ից, որ Հարաւարեւմտեան եր-
կաթողիկոսի գնացը Պապէլիսի կայարա-
նում կանգ առնելուց յետոյ մի սարսափելի
սպանութեան դէպք յայտնվեց, առաջին կաս-
մի վազօնում սպանված գտան Սօֆիա Վօլոդ-
կօյի հարուստ կնոջ. սպանողները յափշտա-
կել են 2000 ռ. փող:

Մեծ-ՊԱՂԷԹ գիւղից մեզ գրում են. «Յու-
ս

մի կարգ հաստատելուց յետոյ, իսկոյն եւ եթ
չարիքի առաջն առնված կը լինի, կը վերանան
խապաւ վերնախանի արտերը ընտանիքներում
եւ այլասեռում մատաղ սերնդի մէջ: Որովհե-
տեւ ոչ եւ ինչ սահմանափակումներ կարող են
արդիւլի, օրինակ, երկու անհատների միասնա-
լուծ, եթէ նրանք սիրուց, թէ կողմնակի հա-
շիւներից դրդված՝ պատրաստ են գիտակցաբար
ամենայն ինքնագործութեամբ զնել իրանց կապը
նոյն իսկ օրինական ամուսնութեանց դուրս:
Բայց մենք պնդում ենք, որ այդ միջոցով գոնէ
կը վերայվեն այն սարսափելի, ողբերգական
դէպքերը, երբ ամուսնացողներից մի կողմը
հետ միասին, գոն են գնում թէ սեփական տը-
գիտութեան եւ թէ չըջապատող հասարակու-
թեան բանիմաց մասի չարագործ անտարբե-
րութեան:

Ուրիշ, հալառակ կարծիքների թուում, մի
հարց, որ ամենից շատ է պղտորում ներկայ
խնդրի վերաբերմամբ նոյն իսկ բժիշկների
միտքը, այդ «բժշկական գաղտնիք» հարցն է:
Կարծում են, թէ ամուսնութեան համար բժշ-
կական վկայականի պահանջ հաստատելու դէպ-
քում կը խախտվի այդ սրբազան պարտակա-
նութիւնը, որ պարտադիր է ամեն մի բժիշկի
համար, ինչպէս եւ իրաւաբանի, քահանայի եւ
այլն, (врачебная, կամ профессиональная
тайна.)

Այդ ենթադրութիւնը մենք համարում ենք
մեծ մասամբ թիւրիմացութեան արդիւնք, ու-
րովհետեւ՝ 1) Երբ այդպիսի մի օրէնք կանցնի
հասարակութեան սովորութիւնների կարգը,
այն ժամանակ հասարակութեան առաջ կը
յայտնվեն բժշկական միմիայն դրական պա-
տասխանները, վկայականները, իսկ քացաւական
վկայական ստանալու առիթ չի լինի: քանի
որ նա ոչինչ նշանակութիւն չունի, ուրեմն

նրա 8-ին, կէսօրից յետոյ, մեծ կարկուտ եւ
կառ Դաղէթում: Մի քանի րօպէի մէջ գիւղի
արտերը, այգիները, բանջարանոցները հիմնու-
վին սնչացան կարկտի տակ. գիւղացու ամ-
բողջ տարվայ աշխատանքը եւ իր տարեկան
պարուստը ջուր կտրվեց: Այժմ գիւղացիները
մեծ յուսահատութեան մէջ են, գուցէ մի քա-
նի տարի էլ չը կարողանան դրսուկել: Շատ ա-
նասուններ են բազմաթիւ սագեր եւ հաւեր
կտորեց կարկուտը: Շատ մարդիկ եւ երե-
խաներ, որոնք բացօդայ էին, վիրաւորվեցին,
—որը զիւրից, որը ձեռքից ու ոտից: Կարկտի
մեծութիւնը մօտաւորապէս հաւի ձուի չափ
էր, իսկ քաշը 3/4 ֆունտ: Այժմ գիւղացիները
օգնութեան կարօտ են:

Լօռու վիճակի ՇԱՀԱԼԻ գիւղից մեզ գրում
են. «Մայիսն անցաւ արտերի համար հրաշալի.
յաճարակի կրկնվող անձրեւները եւ միաժա-
մանակ արեւային օրերը նպաստեցին արտերի
աճմանը, այնպէս որ այս տարի լաւ հնձի ենք
սպասում: Եկող անձրեւները երբեմն իրանց
յորդուլութիւնով վնասում են արտերին, իսկ տե-
ղերը գետնին կպնելով եւ առհասարակ մեծ
վնասներ են հասցնում. այսպէս, մայիսի 27-ին
սարսափելի անձրեւ եկաւ. երկաթուղու վրա
կառուցած Զաւալի կողմէ վիթխարի կա-
մուրջի տակով այնպիսի հեղեղ էր գը-
նում, որ կամուրջը կորցրել էր իր մեծու-
թեան արտաւիր: Այդ հեղեղը քիչ քան
մօտաւորապէս 150 ասփն զարկած պատրաս-
տի վտուկից փայտ եւ խեղդեց գիւղացիների
սարի նախրից երեք գոմէշ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Առաջին անգամ, քրիստոնեաների կոտո-
րածից յետոյ Անատոլիայում, Թիւրքաց հայեր
արժանանում են սուլթանի ողորմած շնորհին,
պ. Պօլիս ուսուցչի ղեկավարին եւ Օրմանեան
պատրիարքի եռանդուն յայտագրերի շնորհիւ:
Թուրք ղեկավարի պահանջով, զինտրագոր-
ծութեան պատուիրու համար կառավարութեան
տրվող հարկի վճարումը յետաձգված է երեք
տարով: Վերջն երեւաց, որ այդ հարկի վճա-
րումը պահանջվում էր Թիւրքիայի բոլոր հա-
շիւից մինչեւ կոտորածները, եւ ոչ թէ այնքան
հայերից, որքան կան նրանք այժմ Նորդու
հրաւորական սուլթանի իրազեկ հիման վրա,
այդ հարկը պէտք է առնվի միմիայն կենդանի
մնացած հայերից հետեւեալ կերպով. առաջին
տարվայ հարկի վճարում է ամբողջապէս, իսկ
մնացած երկու տարվայ պատուիրները պէտք
է հարկեր հետ միասին առնվեն չորս տարի-
ների ընթացքում, չորս բաժին անելով նրանց:
Ի նկատի ունենալով փոքր-ասիական հայերի
ներկայ գրութիւնը, սուլթանի շնորհած արտօ-
նութիւնը մեծ զիւրութիւն կը տայ նրանց:

հիւանդի գաղտնիքը մնում է գաղտնիք, գոնէ
նեղ սահմաններում: 2) Նախ քան, այսպէս ա-
սած, պաշտօնապէս բժշկական քննութեան են-
թարկվելը, ոչ է խանգարում պատկից ցան-
կացողին, մասնաւորապէս զիմեով բժշկի խոր-
հրդին եւ խմանալով, թէ բանն ինչուին է,
հանգիստ տեղը նստել եւ ամեն կերպ խուսա-
փել ամուսնական հարց բարձրացնելուց, ու-
րեմն եւ իր գաղտնիքը բացելու վտանգից: 3)
Դէպքերի առաջին մեծամասնութեան վերա-
բերմամբ բժշկական արգելքն ամենեւին չէ նը-
շանակելու անպայման արգելք ամուսնանալու,
ընդ միշտ, այլ նշանակելու է, որ ներկայ պա-
րուն չէ կարող պատկից այժմ, ներկայ բո-
ւլից, բայց մի յայտնի ժամանակամիջոց անց-
նելուց, յայտնի բժշկական խորհուրդներ
կատարելուց յետոյ, եւ նա կարող է այդ անել
ամենայն իրաւամբ եւ խղճի ազատութեամբ:
4) Վերջապէս ներկիւ է արդեօք մի այդպիսի
երկրորդական, առանձին անհատների ինքնա-
սիրութիւնը միայն շոյող չարժանիքներին,
ինչպիսիք են պրօֆէսորները գաղտնապահու-
թեան պահանջները, գոնի ամբողջ ընտանիք-
ների եւ սերունդների ընդհանուր վիճակը:

Ուրեմն յուսանք, որ այսպէս, թէ այնպէս,
մօտ ապագայում այդ հարցը իր լուծումը կը
ստանայ Ֆրանսիայում, գուցէ եւ մասամբ
ստացել է եւ իրական կենանք մէջ, ինչպէս
վերեւ ասեցինք, շնորհիւ իր բարձր քաղաքա-
կրթութեան եւ ընդհանուր զարգացման: Բայց
թէ Երբ կը հասնի հերթը եւ մեր ժողովրդին,
որ կոյր խլուրդի պէս քիթը հող մէջ խրած
եւ մեղանշում, եւ տանջվում է խաւարի մէջ,
անգիտակցաբար:

Բժշկ. Մ. Զալեան

